ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2024թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՍՊԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն հայ ինժեներ-գյուտարար, տեխնիկական գիտությունների թեկնածու, ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ՀԽՍՀ վաստակավոր գյուտարար Սպարտակ Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոցի հ.6 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՊԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ ինժեներ-գյուտարար, տեխնիկական գիտությունների թեկնածու, ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ, ՀԽՍՀ վաստակավոր գյուտարար Սպարտակ Խաչատրյանը ծնվել է 1925 թվականին:

Ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը:

1977-1982 թվականներին ղեկավարել է «Երևաննախագիծ» ինստիտուտը: Ղեկավար պաշտոններ է զբաղեցրել «Հայհիդրոէներգանախագիծ» ինստիտուտում, այնուհետև ղեկավարել է «Էներգացանցնախագիծ» ինստիտուտը, եղել նախագծման հայկական բաժնի ղեկավար, ապա նույն ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն, Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ՝ նախագծման ու շինարարության գծով, «Հայէլեկտրասարքավորում» ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ՝ գիտության գծով:

Մասնակցել է Սևան-Հրազդան ՀԷԿ-ի նախագծման աշխատանքներին, կազմել է Երևան քաղաքի էլեկտրամատակարարման առաջին նախագիծը, ստեղծել ստորգետնյա հաղորդակցման միջոցները կոռոզիայից պաշտպանող Հայաստանում առաջին լաբորատորիան, նախագծել և զարգացրել է էլեկտրահամակարգերը Հայաստանում և Սարատովի շրջանում, բացառիկ սարքեր, սարքավորումներ է մշակել ու պատրաստել ԽՍՀՄ-ի ողջ տարածքի և Արևելյան Եվրոպայի սոցերկրների էլեկտրահամակարգերի համար, զբաղվել է բնակարանաշինական, քաղաքացիական և վարչական կառույցների, ինչպես նաև՝ մետրոպոլիտենի զարգացման սխեմայի նախագծմամբ ու այլ աշխատանքներով: Ղեկավարել է Կասկադ համալիրի շինարարական աշխատանքները:

Ս. Խաչատրյանը մահացել է 2008 թվականին:

Ս. Խաչատրյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Թամանյան փողոցի հ.6 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է նրա որդու՝ Կարեն Խաչատրյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ